«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-ՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (*Պ-564-19.04.2023-ՖՎ-011/0*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) ընդունման հիմնավորման համաձայն՝ նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է առաջնային շուկայից հիփոթեքով բնակարանի ձեռքբերման գործընթացի կազմակերպման անհրաժեշտությամբ, մասնավորապես, կառուցապատողի հատուկ հաշվի միջոցների տնօրինման հնարավորության սահմանափակմամբ, քանի որ գործնականում կառուցապատողները մինչև շինարարության ավարտն ստանում են հատուկ հաշվի (Էսքրոու հաշվի) միջոցներին հասանելիություն:

Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը առաջարկում է.

1. Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենսգրքի 570.1-ին հոդվածի 5-րդ մասի 2-րդ նախադասությունում և 2-րդ հոդվածի 1-ին մասով նոր խմբագրությամբ շարադրվող օրենսգրքի 928.6-րդ հոդվածի 4-րդ մասում «հատուկ հաշվի միջոցների» բառերից հետո լրացնել «կամ դրանց» բառերը:

2. Նախագծում նախատեսել անցումային դրույթներ՝ սահմանելով, որ օրենքը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագող հարաբերությունների վրա:

3. Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներում «կետը» բառն իր հոլովաձևերով փոխարինել «մասը» բառով և համապատասխան հոլովաձևերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ մասի դրույթները:

4. Նախագծի 1-ին հոդվածում օգտագործվող «կառուցապատման հատուկ հաշիվ» ձևակերպումը փոխարինել «կառուցապատողի հատուկ հաշիվ» ձևակերպմամբ՝ նշված հոդվածում միասնական եզրութաբանություն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով: